

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ՍԵՎԵՐԻՈՍ ԶԱՔՔԱԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ՍԵՎԵՐԻՈՍ ԶԱՔՔԱ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՍՈՐԻ ՕՐԹՈԴՈՔՍ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ

ԴԱՄԱՍԿՈՍ

Ուրախ սրտով ողջունում ենք Ձեր ընտրությունը ի գլուխ Ասորի Օրթոդոքս պատմական սուրբ Եկեղեցու և այսօր Ձեզ ենք բերում Մեր շնորհավորանքի ու եղբայրական սիրո խոսքը Ձեր աթոռակալության հանդիսությանց առիթով, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու:

Սրտանց մաղթում ենք Ձեզ լիակատար քաջառողջություն և երկար տարիների պտղառատ հովվապետություն, ի փառս Ձեր սուրբ Եկեղեցու: Ձեր հովվապետության տարիները թող հանդիսանան նաև նոր մի լուսավոր էջ մեր երկու պատմական քույր Եկեղեցիների առավել սերտ գործակցության սիրով ի Քրիստոս: Այս հանդիսավոր պահին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ընդունեցեք Մեր ջերմ գնահատանքը և եղբայրական ողջագուրումը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 սեպտեմբեր 1980 թ.